Ավարտվեց 2017 -2018 ուսումնական տարին և սկսվում է ամառային արձակուրդը: Մաղթում եմ քեզ անակնկալներով ու հետաքրքրություններով լի բազմաբովանդակ օրեր:

Զվարճացի՛ր, խաղա՛, հանգստացի՛ր, սակայն մի՛ մոռացիր, որ գիրքը պիտի քո ամենամտերիմ ուղեկիցը լինի: Դու պետք է կարդա՛ս, գրե՛ս, մաթեմատիկա պարապես, չէ՞ որ բազմապատկման աղյուսակը դեռ լավ չես սովորել: Փոքրի՛կս, դու պետք է նորանոր գիտելիքներով ու մղումներով մուտք գործես երրորդ դասարան:

Քեզ մաղթում եմ անհոգ և հաճելի հանգիստ:



Գրականության ցանկ

1. Թումանյան Հ. / 5 հեքիաթ/
2. Անդերսեն Հ. - Արքայադուստրը սիսեռահատիկի վրա
   Թագավորի նոր զգեստը
   Խիզախ անագե զինվորիկը
3. Խնկոյան Ա. - Առակներ
4. Կապուտիկյան Ս. - բանաստեղծություններ
5. Պերրո Շ. – Քնած գեղեցկուհին
   Կոշկավոր կատուն
6. Ըստ Հ. Թումանյանի - Գորտը
7. Ըստ Ղ. Աղայանի - Զանգի - Զրանգի
8. Ժողովրդական հեքիաթներ /տարբեր երկրների/